

ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆԱԻՂԱ ԲԱԼԱՅԱՆԻ ԶԱՓԱԾՈՅՈՒՄ*

Սիլվա Մինասյան

Բանալի բառեր՝ Արցախյան ստեղծագործող, չափածո, հեղինակային նորակազմություն, նույնարմատ, հոմանիշ, գոյական, ածական, բայ, կոչական, ածանցավոր, բարդ, բարդ ածանցավոր, փոխառյալ բաղադրիչ, շարահյուսական հարաբերություններ:

Արցախյան ստեղծագործող **Զինաիդա Առաքելյան-Բալայանը** գեղագիտական աշխարհ է մտել չափածո գրքով, թեև արծակ էլ էր տքնել (**Զինաիդա** անունը ռուսերենի միջնորդությամբ հունական փոխառություն է և նշանակում է **Ջևա աստծո դուստր**, որը հասկացվում է **կատարյալ, հզոր, գեղանի**). նա այդ նույնը գործածել է նաև **ՈՒ ՅՈՆ ԻԿ** գրական կեղծանվամբ, որն արևելյան լեզվով նույն՝ **կատարյալ, հզոր**, մեկնությունն ունի՝ հին արևելյան չինական-ձապոնական դիցարանի գլխավոր աստծո դուստր): Վերջինս գործածել է արծակ գեղարվեստում [1]: Նախորդ դարավերջին լույս էր տեսել **Զ. Բալայանի «Շառավիղեալն»** [2] պատմական շղարշով բանաստեղծությունների ու պոեմների գիրքը: **Զ. Բալայանի** գեղարվեստի մի մասը մեր հասարակության բոլոր մարդկանց համար համընկալելի է (այն երբեմն առեցցուն է դժվարամարտ հնաոճ բառերով, որը խաթարում է պարզ ոճն ու գեղագիտական հանրամատչելի արժևորումը): Նրա չափածոն լույսի ու ստվերի ձևով է կառուցված: Ստվերը շատ ջանք է պահանջում որոշ գործերում վերացական և տևական սկիզբ ու վերջ համատեղելու, ընկալելու համար: Գեղագիտական խոսքում պետք է չափավոր ու հազվագյուտ կիրառել ստվերը՝ յուրատիպ ծանրաբեռ ինքնագրույց, ավելորդ ծավալումներ, որոնք կրում են հայերենի հարուստ ու բազմաշերտ բառապաշարի ավելորդ ճոխությունները:

Արցախյան ստեղծագործող **Զ. Բալայանն** իր չափածոյում հայրենիքը, հարազատությունը, սիրելին, իմաստասիրական ընդհանրացումները (փիլիսոփայություն), կյանքի էական պահանջներն անընդհատ առաջադրել է բառերի հորդուն շղարշով: Երբեմն էլ ինքնության վերացարկված գեղագիտական շոշափումներ է կատարել: Դրանցով ինքն իրեն երբեմն գեղագիտական հնարանքներով համարձակվել է հասցնել աստվածացման, որը բացարձակ գեղագիտական ավելորդ շռայլանք, ճոխաբանություն ու չափազանցություն է: Օրինակ՝ ծննդավայր Ավետարանոցի «մամռոտ, հողաբույր, խնկաբույր» Կաղնուտը, որը երբեմն մանկության հիշողություններում թավանիստ կաղնիների գեղատեսիլ ու խորհրդավոր վայրերից, խաղատեղերից էր եղել (այդտեղի խորհրդային Ավետարանոցի յուղի-պանրի գործարանում հայրն ու մայրը՝ Վանյան և Փիրուզան, աշխատում էին հայրը՝ որպես վարիչ, մայրը՝ վարիչի օգնական), գեղագիտորեն յուրատիպ հիշատակումներով մեծարել է իրեն, որը գեղագիտական մտածողության հատկանիշ է.-**Դու, հպարտ Կաղնուտ... ինձ կարգեցիր քո աստվածուհին («Շառավիղեալն», էջ 19), այսինքն՝ Զ. Բալայանն** ունի նաև Կաղնուտի աստվածուհի շրջաստությամբ ինքնաստեղծ ու հետաքրքիր գեղագիտական անուն, որն ականա հոմանշվում է իր օտարահունչ անունների բառացի թարգմանությանն ու հոմանշմանը: Զափազանցված գեղագիտական ինքնաբնութագրություն է նաև տասր տարի առաջ (55-ամյակ) «Ակունք» թերթում տպագրված ու այդ ժամանակ էլ գրված «Ես անսահման եմ զննումների՝ անմեկնելի չափակիրը» գործի վերջին մասում եղածը՝ **Ես՝ բանաստեղծությունս...// կդառնամ տիեզերքի տիրակալը, նրա հավերժող...**

* Հոդվածն ընդունվել է 01.10.19:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի ՀԼԳ ամբիոնի վարիչ, ք.գ.թ., դոցենտ Ժ. Բեգլարյանը: 29.10.19:

տաղն ու տաղերգուն...// անսահմանի կատարյալ, հզոր ու գեղանի թագակիրը (**հեղինակի մեկնաբանմամբ իր ես-ի դեպքում՝ ընդհանրության մեջ, նկատի է ունեցել կին արմատը, կնոջը**): Այստեղ արժե հիշել արցախյան ձանաչված արծակագիր Մաքսիմ Հովհաննիսյանի մի դիպուկ, հասուն ու պարզ գնահատականը Զ. Բալայանի արծակի վերաբերյալ, որն աներկբա տարածվում է նաև չափածոյի վրա. «Պատմվածքների առաջարկվող ժողովածուն լուրջ հայտ է, և դատելով թվագրություններից և՛ առավելապես հախումն բեռնացված զգացումների բռնկումների բնույթից, դա, ըստ էության, **ջախել մատակի** արշավի դուրս գալու բնագոյն է: Ծանրաբեռնված տողերը, մակդիր-ածականների հարևանությունը հեղինակի՝ ասպարեզում իրեն հավաստելու ցանկություն է: Եվ վկայությունն այն **ակի գոյության**, երբ խորքերի դիմադրությունները հաղթահարելով տարերքը պիտի ի հայտ գա: Գործընթացը նախապես ավագ ու խիճ է բերում, հակինթ պարզությունը հետո է գալիս»[3]: Ահա այդ «ավագ ու խիճը» մեզ շատ է բաժին ընկնում, քանի որ եղած հորդուն չափածո գեղարվեստականներն առաջին անգամ հասարակության դատին է տրվել:

Գեղագետ ստեղծագործողը փոքրուց արվեստասեր էր (պարուն էր, ասմունքում, երգում, ստեղծագործում. գյուղական դպրոցի գարդն էր): Հասուն տարիքում գրականագիտական նվաճման հասավ (գիտական թեզը «Մուրացանի «Գևորգ Մարգարետունի» վեպը և նրա պատմական աղբյուրները» թեման էր): Զ. Բալայանը սիրում է ընդհանրապես յուրատիպ ինչ-որ բան գեղագիտությունում ստեղծել ու մատուցել հասարակությանը, որն ընկալողներին երբեմն տարօրինակ է թվում (ինքնին այդքան նորակազմ ու հնաժամ բառերով խոսքը երբեմն ծանրաբեռնելը նաև ստեղծագործական անհատական ծայրահեղություն է դառնում, իմացությունը ցուցադրելու հակում), երբեմն էլ շատությունը խանգարում է պարզությանը, տրվածի հստակ ընկալմանը: Օրինակ՝ «Շառավիղեայն» պատմական շղարշ ունեցող գրքի անունը կրում է հազարամյակներ առաջ եղած օրվա առավոտի ժամանուններից մեկը և դրա I մասում արդի ուղղագրություն է, իսկ ածանցյալ մասում պահպանված է անհատական հեղինակային նախասիրությունը՝ գրաբարյանը (գծիկով հարադրված բառերի վերնագիր կա, որտեղ ևս նույնն է՝ առաջին բաղադրիչի I-ը արդի վ- է, իսկ II բաղադրիչը՝ դասական գրաբարյան ուղղագրությամբ՝ ԲԱՎԱԿԱՆ-ԱՌԱԽՕՏ [4]. նույնիսկ մեխանիկական այդ կիրառությունը տասը տարի առաջ «Շուշի» [5] թերթում էլ կար՝ «Աստվածային... հուր թափեալ» կառույցի II մասը գրաբարյան է՝ յա<եա, իսկ I-ը արդիով է՝ վ-, փոխանակ ու-ի՝ Աստուածային և այլն):

Զ. Բալայանի չափածոյի գեղագիտական բառապաշարն ընդգրկում է գրականացված հայերենի գործառական տարբեր բառաշերտերը, որը գեղագիտության յուրահատկությունն է: Դրանք ծավալուն գեղարվեստական, առտնի-սովորական, չափավոր հրապարակախոսական, հազվագյուտ՝ վարչագործարարական ու գիտական ոճի բառեր են: Սովորական ընթերցողների համար երբեմն ճնշող հնաբանություններով ու ծավալուն ինչյունախմբերով հագեցած որոշ գեղագիտական նորակազմությունների ծավալուն ընդգրկումներ ավելորդություն, ծանրաբեռնվածություն են ստեղծում (նորաբանությունները տարբերակվում են իմաստային և բառակազմական՝ նորակազմություն, հատկանիշներով, առավել շատը նորակազմություններն են, որոնց ընկալումը և տարբերակումը դյուրին է): Տաղաչափական որոշ յուրահատկություններ, հատկապես մտքերի թափը, հանգավորումը նպաստում են դրանց ստեղծմանը (ինչպես նաև հետագայում՝ հասուն տարիքում, այդպես ստեղծածներն առավել շատ են զգացվում հատկապես պատմական երանգավորում ունեցողներում), ինչպես՝ Լույս արարչության-// Հեղեղ ծորափայլ, // Հոգու կանչերի// Խորան թանձրափայլ և այլն [6] (այս բառերը նաև ստեղծվել են ուշադրության կենտրոնում եղած օրվա հնագույն ժամանուկների համաբանությամբ): Հեղինակի մտորումային կառուցողական աշխատանքը հագեցած է **Միներվայի բուի** տքնանքով (**Միներվան** [7] լատինական աստվածուհի էր՝ Կապիտո-

լիումի սրբազան III-ը, արհեստավորների և արվեստի ներկայացուցիչների խնամակալ, այդ անունը հոմանիշ է հունական Աթենաս գլխավոր աստվածությանը, որը միկենյան աստվածություններից էր, ամպերի, կայծակի տիրուհին, պտղաբերության, խաղաղ աշխատանքի աստվածուհին): Գեղարվեստական տքնանքով ստեղծվածը, ընթերցողներս ստանալով, վայելում ենք, բայց լավի շատությունից երբեմն ծանծրանում ու դժգոհում: Խոհուն ու գիտուն հասարակության համար գերադասելի է պարզությունը՝ հազվագյուտ համեմված չափավոր խրթնաբանությամբ:

Մեր ուշադրության կենտրոն Զ. Բալայանի գեղագիտական առաջին գրքում ընգրկված չափածոյի միջուկը հասարակության իշխող խավի համար ընկալելի սովորական տքնանք է: Օրինակ՝ ահա Հայրենական-Արցախական շարքից «Հայրենիք» բանաստեղծության տարբեր մասերից հատվածներ.

Հայրենի՛ք, հոգիդ Ցավի բռունցք է,
Հույսի, Կարոտի, Պայքարի բռունցք,
Որ երիզվել է Լուսի շրայով...
Բայց Ցավս, Ցավս, ախ, չմանրեմ...
Հայրենի՛ք, «Մերո՞ք բոցեղեն շապիկ է՝
Հագնում եմ՝ այրվում եմ,
Հանում եմ՝ մեռնում եմ...»
Հայրենի՛ք, վերցրո՞ւ անվստահությունը,
Հայրենի՛ք, մի՛ լեր աղերսը հեզնող,
Հայրենի՛ք, արդար վճիռդ արա՛,
Ախ, Լուսիդ շեղքը տո՛ւր իմ լուռ Ցավին,
Իմ մաքրագործված արյան տքնանքին...
Հայրենի՛ք՝ Արդար ու Մեծահոգի,
տո՛ւր արդար վճիռ,
Հայրենի՛ք, Ցավս զսպաշապիկ է... (էջ 3-4)

Հայրենիքի սերը հեղինակի համար «Հեռավոր մի երգ» բանաստեղծությունում, որը նախորդի շարունակությունն է համարյա, «հրեղեն շապիկ» է, իսկ ցավը՝ «արցախե շապիկ» (էջ 4, 5. Արցախ հայրենիքի պայքարի ելած ժամանակահատվածում հասունացած բանաստեղծուհին այլաբերված կապակցություններով վարպետորեն համատեղել է ընդհանուրն ու մասնավորը՝ համամարդկայինն ու սեփականը): Դրանք մանրանկարվել են զինափական գեղագիտական խոսքով, որտեղ զգալի են նորակազմությունների բառաշերտային արժեքները, նաև սակավ՝ իմաստաբանականը (քննարկված վերջին նախադասությունում արցախե [8] բառը հեղինակի մտահորիզոնում կենտրոնացված հայրենիքի հատուկ անունն է ու նրանից բխած իր ժամանակի նորակազմությունը, որը ստեղծագործական թափի ու հեղինակային բառակազմական վարպետության արտահայտություն է. ընդհանրապես դարասկզբին լույս տեսած նորակազմությունների բառարանում ԱՐՑԱԽ արմատից քսան կառույց կա հիշված):

Զ. Բալայանի չափածոյից առանձնացրել ենք 217 նորակազմություն, որն ընդգրկված է նշված գրքից բացի նաև «Մետրոպ Մաշտոցին» [9] նվիրված բանաստեղծությունում, մամուլում եղածները՝ «Գրական թերթ», «Ակունք», «Շուշի», «Նոր Շահումյան» «-Լուսարար», «Ստեփանակերտ» և տպագրված ևս երկու բանաստեղծություն՝ «Իմ Դարաբաղ», «Ավետարանոցական իմ դպրատուն»): Նորակազմությունների [10] մեծ մասը ծնվել է գեղագիտական մտքերը մանրամասնելուց: Ահա դրա լավագույն արտահայտություն «Լուսավաղյուն-Փայլածումն» բանաստեղծության Արցախա ծուխ հասկացության հատկանիշների փառաբանումն արտահայտող մակդիրները՝ (13 մակդիրներից 7-ը նորաբանություն է, 6-ը՝ նորակազմություն, մեկը՝ իմաստաբանական՝ ջրեղեն, բնական աղբյուրներ, առուններ, գետակներ, գետեր շատ ունեցող): Ահա դրանց շարքը՝

երկնեղեն, հողմեղեն, մարդեղեն, լուսեղեն, կապտեղեն, ոգեղեն, ջրեղեն, մարմնեղեն, ծանրեղեն, ծոցվորեղեն, երգեղեն, մարտեղեն (էջ 12):

Եթե Զ. Բալայանի ունեցած քիչ չափածոյում ստեղծված շատ նորակազմութիւնները համբերութեամբ մանրագնենք, ապա հայկական բառային այդ գանձերը դյուբական մի այլ աշխարհի կբացեն մեր առաջ (պաճուճանքների շատութեան պատճառով գեղագիտական ծանծրայթը մի կողմ դնենք և լեզվաբանական քննարկում կատարենք՝ զինված մասնագիտական համբերութեամբ): Այդ նորակազմութիւնները հեղինակը ստեղծել է զգուշութեամբ, սիրով, տքնանքով ու գիտակցական շռայլանքով (որոշ օրինակների կապակցումները հաջող չեն): Ղրանք հիմնականում հայերենի ընտիր ոճին յուրահատուկ բառեր են (քննարկվող չափածոյում սովորական-խոսակցականից հազվադուր նորակազմութիւններ կան, ինչպես՝ խնոտվել, պեծկլտին, մածնաթանծրուկ): Իրար հոմանիշ կամ իմաստաբանական կապով հարակից, մոտ կիրառվածները զուտ նպատակային իմաստով են՝ հոգու զեղումները մեր բառապաշարի ճկունութեամբ, հարստութեամբ ու իմացութեամբ ի ցույց հանելու բնավորութիւն, մեր հնամենի հայերենի անզուգականութիւնը հիշեցնելու մղում: Օրինակ, ահա «Իմ ծխանի ծուխ» հուզաթաթափ հայրենասիրական փոքրածավալ գործը, որտեղ երկու նորակազմութիւն կա (արցախածին-ը հիմա Ս. Էլոյանի բառարանում գրանցված է, ուստի մեր ներկայացրած հեղինակային բառաշարքում չկա):

Ի սկզբանե համանվագ,
առնական, ձիգ ու հյուրընկալ

արցախածին
տո՛ւն հայրենյաց...

Իմ ծխանի ծուխ,
իմ միշտ բաց դուռ,
իմ քարեղեն,
իմ ոգեղեն,
իմ հացապաշտ

տո՛ւն հայրենյաց... (1986 թ., գ. Ավետարանոց)

Երբեմն նույնարմատ բառերի շարք է կազմվում, որտեղ ականա նորակազմութիւն է նաև ձևավորվում, ինչպես Կարոտին նվիրված ցավի աստիճանավորված արտացոլանք «Նորին Մեծութիւն Կարոտ իմ...» կիսահումորային բանաստեղծութիւնում (էջ 94-ի տողային աստիճանավորումում միայն աքսորահեծ նորակազմութիւնն է, իսկ 95-ում մեկն էլ է հավելվում):

Իմ աքսորված, աքսորական, աքսորահեծ,
աքսորասպան

ու Հալլեյի գիսավորի հավերժ ծավի՝ Նորին
Մեծութիւն Կարոտ: (95)

Ահա զույգ նույնարմատ նորակազմութիւնների գործածութիւնը «Գրական թերթում» տպագրված «Տարածաչափումից» գործի մի հատվածում՝ յոթներից, յոթնացոլում [11]. այստեղ առկա են նաև այլ նորակազմութիւններ, ինչպես՝ քառապաղք (ծիուքա՝ չորս, ոտքերի սլացք՝ քառատրոփ), արծվավազան, չափակիր, դշխոյասեր):

...բուրաստանները Մասայաց

թագակիր բոլորակներով

քառապաղքի,

լանդշաֆտն յոթներից ու

յոթնացոլումի՝

արծվատեսով ու արծվավազանով ու

արծիվներով չափակիրների

ու դշխոյասեր, հպարտ կանդերի...

Հեղինակի կողմից ստեղծված նորակազմությունները (հողմեղեն, մարդեղեն, կապտեղեն, ջրեղեն, ծանրեղեն, ծոցվորեղեն, երգեղեն, մարտեղեն) գեղագիտական հանգավորման ընթացք ստացած նույնաձանց բառերի շարք են կազմում նպաստելով բարեհունչ խոսքի գեղագիտական արժևորմանը: Այդ տիպի II-ական բուն բառակազմական –եղեն ձևույթը ոճական կրկնաբերությամբ ի ցույց է հանել քաղցրալուր հայերենի բաղադրյալ բառերի հարստացման հնարավորությունները:

...այդպես հողմեղեն, այդպես ջրեղեն,
այդպես մարդեղեն, այդպես մարմնեղեն,
այդպես լուսեղեն, այդպես ծանրեղեն կելնե,
այդպես կապտեղեն, այդպես ծոցվորեղեն,
այդպես հրեղեն կելնե, այդպես երգեղեն,
այդպես ոգեղեն, այդպես մարտեղեն կելնե... և այլն (12)

Այդպես նաև –ավոր վերջածանցն է հնչել, որով կառուցված երկու նորակազմություն կա.

Հրաշքը բեղուն ու երգավոր է,

ո՛վ վերքավորներ...

ո՛վ բեռնակիրներ... ո՛վ բեռնավորներ... (86)

Բնական է, դրանք գեղագիտական խոսքում ազատ կիրառությամբ խոսուն երկփեղկված ածականներ են, որոնք հավաստում են մեր ձկուն լեզվի հարուստ հնարավորությունները:

Հոգեկան առատ գեղումներով կառուցված «Ավետարանոցական իմ դպրատուն» բանաստեղծությունում ևս նորակազմությունների տևական շարք կա կոչականի կիրառությամբ: Այդ արտահայտչական ձևը բնորոշել, ուշադրություն է հրավիրել հարազատ ծննդավայրի հանրահայտ հատկանիշների վրա: Դրանք սեփական ընկալումների ճոխ բառապաշարով, ներքին մտահայեցողությամբ, շրջապատի, հասարակության համար ճանաչողական բնորոշումներով, նրբագույն կամ հնչեղ գեղագիտական բառերով անընդհատ շեշտել են հայրենիքի անբաժան մասնիկ լինելը, կոչով հավաստել հեղինակի տարաբնույթ առնչությունները ծննդավայրին:

Ի՞մ դպրատուն, Ի՞մ երկնեղեն,

Ի՞մ սրբատուն, Ի՞մ ոգեղեն

Ի՞մ գիտատուն, Արեգական իմ լուսեղեն...

Ի՞մ մեծատուն, Ի՞մ նշխարանք,

Ի՞մ մեծաց տուն... Ի՞մ դարձարանք,

Ավետարանոցական ի՞մ ուսուցչատուն... Ի՞մ երգարանք,

Ի՞մ վեհեղեն, Ի՞մ գանձարանք,

Ի՞մ հայեղեն, Սրբազնական իմ դպրեվանք և այլն:

Այստեղ գործածված նորակազմություն կա –ք/-անք (ան+ք) բառակազմական II-ական ձևույթով (նշխարանք՝ սրբություն), որի մոտ որոշ բառերում արդի հայերենով ընկալելի այդ ածանցը չկա (դպրեվանք-ը սովորական բառ է), ինչպես՝ երգարան/ք, գանձարան/ք: Դա զուտ գեղագիտական հանգաբանությանն ծառայեցնելու ավելորդ զրաբարատիպ հոգնակի ձև է, իսկ դարձարան/ք հնաբանությունը կարելի է իմաստաբանական նորաբանություն դիտարկել (առանց –ք-ի ձևը ոչ ընկալելի հնաբանություն է. Դարձարան [12]՝ ապաշխարությունից դարձի եկողի ընդունարան, որտեղ հաստատում էին մաքրվելը. դարձարան իմաստաբանական նորաբանությունը կարտահայտի հաճախակի վերադառնալը, այցելելը):

Հեղինակը, բնարական մոտեցմամբ գործածելով քերականական –վ բայաձանցի բոլոր իմաստներով կառույցները՝ բառակազմական, սեռային՝ կրավորական, միջին-անդրադարձ՝ անդրադարձ, փոխադարձ [13], հոգեբանական բացահայտումներով ստեղծել է գեղարվեստական կոթող, որտեղ նորակազմություն է ոգեղենվել բայը (2.

Բալայանը նորակազմ բայերին սակավ է անդրադարձել, ինչպես՝ առանձնաձայնել, մեղեդայնվել, գուսանավորվել, ոգեղենվել, խևոտվել և այլն): Օրինակ, ահա «Ակունք» թերթում «Ես անսահմանն եմ՝ զմնումների անմեկնելի չափակիրները...» պոեմից մի հատված, որտեղ –վ բայածանցի արժևորումները էլի զգալի են, այստեղ էլի գործածված են նորակազմություններ: -վ-ի (-վել) գործադրությամբ նորակազմ մեկ բայ կա՝ ոգեղենվել-Ահա(աա)աա:

Բանաստեղծությունն այդ ես եմ,
արարվել եմ երկնային քամիների կանչերում...
երակվել եմ երկնամերձ կապույտներում...
սիրոտվել եմ երկնամերձ կապույտներում...
հագել եմ կապուտակարոտագույնը...
որ անթերի մեկնում է մարմնախորհուրդներն իմ...
դյուրվել եմ ելևէջներում հավերժի...
ոգեղենվել եմ գունատումներում արևագալի...
բուրել եմ գերիմացության անժիրներում...
երգվել եմ Ցայգ ու Այգերին, Հրակաթին տիեզերքի անկողիններում...

սիրվել անմնացորդ... (և այլն). բնագրում օրվա պահերի հին ժամանումները վրիպակով փոքրատառերով են գրված՝ ցայգ ու այգ/երին, հրակաթին. այսպիսի ձևում հրակաթ-ը նորակազմություն է թվում, մինչդեռ մեր հնագույն հայերենի օրվա ժամանում է, դրանք հատուկ անվան արժեք ունեն):

Լյժմ ներկայացնենք նորակազմություններն ըստ գործածության սկզբնաղբյուրների:

1. Ահա մեր բանաստեղծուհու «Շառավիղեալն» գրքում եղած նորակազմություններն ըստ խոսքի մասային պատկանելության (հիմնականում գեղարվեստին յուրահատուկ ածական խոսքի մասի գերիշխանությունն է, բայը՝ սակավ. նորակազմություն է նաև գծիկով հարադրված սովորական բառերի բարդությունը):

ԳՈՅԱԿԱՆ նորակազմություններ՝ հրահարս (հոնի ծառը, 22), խոհավազան (42, 46), մածնաթանձրուկ (43), վարդահենք (53), սրբածին (56), խաչված-լքված/ին (57), բոցատեսություն, պտղահանդես (59), մեղք-մեղավորություն (60), կարմրահենք (61), զորանք, զորախմբերգ (62), ջրախմբերգ (64), կենդանահաբ (65), ծայգագույն/երի (66), երազաերգ (75), հուրուհորդեհ (88), արեգնաերգ (89), աստղահենք (95):

ԱԾԱԿԱՆ նորակազմություններ՝ մեղքաթաթախ (3), արցախե (4), հացապաշտ (5), գրադակոծ (6, 9), փոթորկահարված (6), կարմրավոր, խևոտված (7), երկնեղեն (11), հողմեղեն, կապտեղեն, ծանրեղեն, ծոցվորեղեն, երգեղեն, մարտեղեն (12), քանդուկծիկ (13), գեներածիգ (17), արձձասահ (21, 34), հուրաչք (22), արցունքաաչք (23, արցունքաչ ձևը կա), խոհաչք (26), գալարավարս (28), ծալիկ (29), ծորափայլ (32), երփնափայլ (35), խրոխտափայլ, ծալիաչվի (41), բոնոնյան բեկոր (42), իմաստնափառ (46), շառաշրթունք (50), հորդախնդուն (51), ամենաբաղձյալ խիղճ (53), թավաչք (54), հայացքատես (60), զորախմբերգ (62), վարդավառյան (66), արցախյան (67), դարաիեն (78, դարերով հեծեծալ), երգավոր, վերքավոր (86), դալկադալուկ (90), աքսորաիեն (94), մեղկանյութ, այրածին, թավախայծ, աքսորասպան (95) և ջրեղեն (12):

ԲԱՅԱԿԱՆ նորակազմություն՝ ննջավորել (8), երկունքվել (երկունքվում էին արևի սիրուց, 50), հողմածեծվել/ած (64), սիրակիզվ ած/ել (65), մարդդեղվել (11, 82), շառաթերթված/ել (95):

2. Կան նաև XXI դարի մամուլում տպագրված գործերում եղած նորակազմությունների շարքեր, ինչպես՝ «Գրական թերթ», «Հիմա կամ Կալի Յուզայի մեռյալ գոտու անմեռ ժամանակը» բառապաշք, մտախոյ, գաղտնավոր, մտախորշակ, ընծայահպում, տիեզերաշուրթ, չափակիր, ոգեղենական, խոհադեն, երկնասրահ, հրաշագնում, ընծայահպում, սպասամուտ, երկնակարգ, քննամիտ, գաղտնատեսություն, քառապաշք, յոթնաերիգ, յոթնացույն/ի, արծվավազան, հրաշասիյուր, դշխոյասեր, կարոտագիր,

տիեզերամիտ, յոթնահայեցում, գերայայծառամիտ, եռաքննում, սիրափթթում, օծամարմին, սուպրամենթալ, երկրամուր, անդնդախորշ, երկնասպիտու, աստվածաշնեմ, նախահիմն, մայրամիտ, առանձնաձայնել, զիզգազավորում, երկնեղենություն: «Ակունք» (ապրիլի 30, 2009 թ.)՝ շուշանաշար, վարդեկանչ, վարդեվարդ, հուրյան, պեծկլտին, հերածուի, գաղտնաթռիչք, ծաղկածիր, մոգեկիր, աստղագնդ/եր, բնութենամերկ, շրթնածիր, հուրյան-հուրյան, ոգեռք, բանասպիտու, չափակիր, տիեզերեղեն, հրաշափնզհիմնեղով, արյունավիշ, խելառում, արփիեղեն, մեղեդայնվել, վիրոտվել (վիրոտել ձևը կա չեզոք բայի նշմամբ, վ-ով ավելի հարմար է), սերմնածաղիկ, կապուտակարոտագույնը, գունատրում, մարմնախորհուրդ/ներ, ոգեղենվել, տիեզերաբաշ, քննամիտ, ջրամոգ, սիրագուգ, թևակիր, գերայայծառացում, շանթագող, գաղտնատես: «Շուշի» (N 06-07, մարտ, 2009 թ.)՝ հասցեավոր, հավերժահմա, հողմեղեն, հանկարծատեսություն, կարմրածող, նորահեն, ալազանագարկում/-ել, ողբանախշ, խնոտվել, գունատրություն, ծավիաչվի, ցավածեի, հեզնաղեն-սարկազմ, տերունաբար, ջրամիտ, ծովամիտ, մորմերկ (մորմերկ նորակազմությունը եղած մորմերկ բառի տարբերակն է): «Նոր Շահունյան» (N 6, 2009 թ.)՝ տարածաչափում/ի, ահե, նրբահույս, բութ-անշարժություն, բացխիուկ, ծովաթով, ծովատենչ:

3. Վերահրատարակված «Մեսրոպ Մաշտոց երևույթը և հայոց ազգային գաղափարաբանության բարդույթը» («Պոլիգրաֆ» հրտկչ., Ստ., 2008 թ., 36 էջ) գիտամեթոդական ձեռնարկում տեղադրված «Մեսրոպ Մաշտոցին» նվիրված բանաստեղծությունում երկու նորակազմություն կա՝ հայահնչուն, սրբածին:

4. Չտպագրված գործերում եղած նորակազմություններ՝ «Ավետարանոցական իմ դպրատուն» անտիպ բանաստեղծությունում՝ ավետարանոցական, գիտատուն, ուսուցչատուն, վեհեղեն, հայեղեն, երկնեղեն, նշխարանք, դարձարանք, սերմնածիր, ծաղկածիր, մեղրածիր, խլածիր, ջրածիր, բանադուռ, արքայադուռ, գաղտնաղեն, հայրաղեն, մայրաղեն, աստղարանք, տողարանք, նշխարանք, մեկնարանք, դյուցազնատուն, ոգետուն, կամարակոպ, խուլեղեն, խնկատուն, հավերժաղեն: «Իմ Ղարաբաղ» անտիպ բանաստեղծությունում ևս նորակազմությունների շարք կա, ինչպես՝ աստղագնդ/եր, վարդեվարդ/եր, մոգե, կարոտատուն, հաղթատուն, երազամերիկ, արևատենչիկ, բարձրավոր, արևվոր, տոսիավոր, խաղավոր, գուսանավոր, գուսանավորվել, խնկամոմիկ, աղբյուրաշուրթ, արցախագիր, ռազմավորվել, մարտնորվել, հաղթնորվել, լուսահանդես, շառացուք, վսենակիր, արիակիր, ազատակիր, գարունավորվել:

Ահա նույնարմատ կամ նույնածանց նորակազմությունների շարքեր՝ Արցախ-արցախե (4), արցախածին (5), արցախյան (67), մարդ-մարդդեղված (11), մարդեղեն, (12), փայլ- ծորափայլ, թանձրափայլ (32), հուր-հուրաչք, հրահարս (հոնի ծառը, 22), գոր-գորանք, գորախմբերգ (62) և այլն: Դրանք, սերտ գործածվելով, չափածո գեղագիտությանը յուրահատուկ նույնարմատ (նաև նույնածանց) նորակազմությունների դյուրասահ ու դյուրահունչ շարք են կազմում և խոսքին հաղորդում կարևորն ընդգծելու ռճական յուրահատկություն (նույնիսկ ածանցները ևս այդպիսի նպատակային կիրառություն են ստանում), ինչպես՝ սերմնածիր// ծաղկածիր// մեղրածիր// խլածիր, վերջածանցներից՝ -եղեն՝ վեհեղեն// հայեղեն// երկնեղեն, -ավոր՝ բարձրավոր// արևվոր// տոսիավոր// գուսանավոր և այլն: «Իմ Ղարաբաղ» անտիպ բանաստեղծությունում գուսանավոր, գուսանավորվել նորակազմությունները նույն տողում իրար կից են կիրառված, սերված են նույն արմատից ու ահագնացնում են արցախյան բանաստեղծական ձիրքը, հույզից, սիրուց ծնվող արվեստի առատությունը:

Ընդհանրապես նորակազմությունների մեծ մասը հենքում (տեքստ/գրվածք. Զահուկյան Գ. Բ., «Շարահյուսական ուսումնասիրություններ», էջ 12 և այլն, Ասողիկ հրտրկչ., Ե., 2003 թ., 165 էջ) հավուր պատշաճի է կիրառված: Սակավ են իմաստաբանական անհարիր կապակցությունները (շարահյուսական կապակցություններում կամ

բարդ բառերի բաղադրիչների միջև), բայց զգացվում է հեղինակային նորակազմությունների վերաբերյալ միտումնային վերաբերմունքը: Նորակազմ նույն բառերը Զ. Բալայանի կողմից հազվադեպ են կրկնվել՝ «արցախե շապիկ» (էջ 4, 5), կարմրավոր Այն ո՞ր քարավանն է, որ կարմրավոր է, // կարմիր դագաղ ունի... // պինդ բռնեք կարմրավորն այդ // և դրեք հայրենի հողին... (էջ 7) և այլն: Օտար բառերով նորակազմություն հազվագյուտ է կիրառված: Կարծես ուշադրություն բերել տալու ու հաղորդվելիքը սաստկացնելու համար է: Օրինակ՝ սուպրամենթալ բառը («Գրական թերթ»)՝ «Հիմա կամ Կալի Յուզայի մեռյալ գոտու անմեռ ժամանակը» գործում այդպես է դառնում (Словарь иностранных слов, ст. 490 և Ա. Հայրապետյանի «Օտար բառերի բառարան», էջ 536): Այն կիրառված է հայերն նույնարժեքի հետ (լատինական սուպեր՝ վերևից // վրա // վեր // մակա // գեր) ... գերիմացական, սուպրամենթալ // չափություններին // անչափական ու գաղտնավոր: Նաև օտար արմատը, որը հիմա սվորական դարձած զենքի անուն է, բաղադրված է հայերեն բաղադրիչի հետ ու սերվել է նորակազմություն՝ գրադակոծ, ալագանազարկել: Կա նաև օտար բառակազմական II-ական ձևային արժեքով ընդգրկված բաղադրիչով նորակազմություն՝ հրաշաձնգիմ/ներով:

Նորակազմություն կա, որ առանձին անհարիր է թվում, բայց գեղագիտական հենքում (տեքստում) իրեն արդարացնում է: Օրինակ՝ թավաչք (թավ՝ խիտ), աչքը չի կապակցվի այդպիսի ածականի հետ, բայց ահա գեղագիտական օրինակում այդ նորակազմությունն այլաբերական դիպուկ արտահայտություն է ստորադասված ժպտացող/կարմիրին (փոխանունություն) ու ձեռք է բերել պայծառություն իմաստը:

Ու տոնական լույսի ցուր.

մեկ-մեկ կարմիրն է

ժպտում թավաչք...

ախ, այդ կարմիրը՝

գույնն աստեղային,

կարոտի Լույսով օծված... (54)

Զ. Բալայանի չափածոյում գործածված են 217 նորակազմություններ, որոնց խոսքի մասային պատկանելությունը այս բնութագիրն ունի. գոյական՝ 84, ածական՝ 117, բայ՝ 15, եղանակավորող բառ՝ 1: Այդ նորակազմություններից ածանցավոր են 52, բարդ՝ 94, բարդ ածանցավոր՝ 71 (եռածանցավորները սակավ են, ինչպես՝ Աաաա՝ աստղ/ար-ան-ք, բն/ութ-են-ական, գուսան/ավոր-վ-ել, դար/ծ-արան-ք, խև/հտ-վ-ել, ծոց/վոր-եղ-են, հաղթ-ևոր-վ-ել, մարտ/ևոր-վ-ել, մեղեդ/այն-վ-ել, ռազմ/ավոր-վ-ել, վիր/հտ-վ-ել, տող/ար-ան-ք. ավելին՝ ավետ/ար-ան-ոց-ական, երկն/եղ-են-ութ-յուն, մե/կ-ն-արան-ք, այդպես են նաև եռարմատ բարդությունները՝ ԱհԱհԱ՝ դյուցազնատուն, ԱհԱՄ՝ գորախմբերգ (62), ԱհԱ՝ հեզնադեմ-սարկազմ, ԱԱհԱ՝ տիեզերաբաշ, տիեզերաշուրթ, տիեզերամիտ):

Ընդգրկված 165 նորակազմ բարդության (բարդ, բարդ ածանցավոր) բաղադրիչների հիմքերը (սերող և բաղադրող), խոսքիմասային պատկանելությամբ, հիմնականում նյութական իմաստ ունեցողների շրջանակներում են (եռաբաղադրիչ բարդությունը սակավ է. հիմնականում երկբաղադրիչ է, մթազնված խոսքիմասային հիմքերը ևս սակավ են, ինչպես՝ բնութենամերկ-ԱաաաԱ՝ Գ+Ա (բնություն, մերկ), թե՞ Ա+Ա (բնական, մերկ), կամ մարդդեղվել/ած/վեց՝ Գ+Բ թե՞ Ա+Բ (11, 82՝ հոսքը մարդդեղված՝ մարդկանցով, թե՞ մարդկայինով բուժված, լցված, մարդդեղվեց՝ մարդկայինով, թե՞ մարդկանցով բուժվեց (դեղվել՝ դեղ ընդունել, բուժվել) և այլն), սիրազուգս՝ Գ+Գ թե՞ Գ+Բ և այլն. խոսքի մասերի անվան I տառերն են խորհրդանիշ գործածված): Ահա եռարմատ բարդությունների խոսքի մասային սերող և բաղադրող կաղապարները՝ հիմնականապարհի[14] առանձնացմամբ՝ (Գ+Գ)+Գ՝ դյուցազնատուն, Գ+(Գ+Գ)՝ գորախմբերգ (62), Գ+Գ-Գ՝ հեզնադեմ-սարկազմ, (Ա+Գ)+Գ՝ տիեզերաբաշ, (Ա+Գ)+Գ՝ տիեզերաշուրթ, (Ա+Գ)+Բ՝ տիեզերամիտ: Ահա բարդ բառերի բաղադրիչների՝ բաղադրահիմքա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

յին խոսքի մասերի պատկանելության քանակային ցուցակը, որտեղ իշխում են գոյական+գոյական և գոյական+բայ կադապրները՝ Գ+Գ՝ 71, Գ+Ա՝ 3, Ա+Գ՝ 35, Գ+Բ՝ 56, Բ+Գ՝ 3, Ա+Ա՝ 2, Ա+Բ՝ 1, Բ+Բ՝ 1, Թ+Գ՝ 2, Թ+Թ՝ 3, Մ+Բ՝ 8:

Գործածված բաղադրյալ նորակազմությունների բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները երեք խոշոր խմբով են, որտեղ հիմնականը ստորադասականն է (երբեմն հարաբերությունը դժվար է լինում ստույգ որոշել՝ խորշակամիտ՝ որոշիչ որոշյալ՝ (խորշակի /նման մտքեր), թե՞ պարագա ստորոգյալ՝ (խորշակի նման մտածել), կամ՝ մայրամիտ՝ պարագայակա՞ն (մոր նման մտածող), թե՞ հատկացական՝ մոր մտքեր կամ որոշչային՝ մայրական մտքեր ևն): Ահա դրանք՝ ստորոգումային հարաբերություն (ենթակա+ստորոգյալ, հազվագյուտ)՝ 2, ստորադասական հարաբերություն (շատ՝ 152, իշխողը որոշչային հարաբերությունն է)՝ որոշիչ-որոշյալ՝ 67, հատկացական՝ 29, պարագայական՝ 23, խնդրային՝ 34, համադասական հարաբերություն (սակավ է)՝ 14: Համադասական հարաբերություններում հազվագյուտ է ու համադասական շաղկապով կապակցվածը, ինչպես՝ քանդուծիկ (13), հուրուհորդեհ (88) և այլն:

Այսպիսով՝ արցախյան ստեղծագործող Ջինախյա Առաքելյան-Բալայանի (ՌԻ ՅՈՒՆ ԻԿ) չափածո գեղագիտական աշխարհի բառապաշարն ընդգրկում է հոգեկան ապրումներով առեցցուն **նորաբանություններ**, որոնք հիմնականում նորակազմություններ են: Դրանց գոյականների մի մասը կոչականներ են: Ըստ խոսքմասային պատկանելության՝ նորակազմություններում հիմնականում գեղարվեստին յուրահատուկ ածականներն են իշխում (գոյականը քիչ է, իսկ բայը՝ սակավ): Այդ նորակազմությունների մի մասը հոմանիշ, նույնարմատ ոճական հետաքրքրություն ունեցող կառույց է: Նորակազմությունները, ըստ բառային կառուցվածքի, ածանցավոր, բարդ, բարդ ածանցավոր են, որոնց խոսքիմասային պատկանելությունը և շարահյուսական հարաբերությունները հայերենին յուրահատուկ ձևերի հաճախականություն ունեն:

Ահա այդ **217 նորակազմությունների** այբբենական շարքը:

Ազատակիր
ալազանազարկել
ահե
աղբյուրաշուրթ
ամենաբաղձյալ խիղճ (53)
այրածին (95)
անդնդախորշ
աչքադիր
առանձնաձայնել
աստղազնդեր
աստղահենք (95)
աստղարանք
աստվածաշեն
ասք-հորովել
ավետարանոցական
արիակիր
արծվալազան
արձձասահ (21, 34)
արյունավիշ
արցախագիր
արցախե (4)

արցախյան (67)
արցունքաչք(23, արցունքաչ
ծևը կա)
արիիեղեն
արքայադուռ
արևատենչիկ
արևվոր
աքսորահեծ (94, 95)
աքսորասպան (95)
բանադուռ
բանասիրյուռ
բառապաշք
բարձրավոր
բացխիուկ
բնութնամերկ
բոնոնյան բեկոր (42)
բոցահանդես (59)
բոցատեսություն (59)
բութ-անշարժություն
բույր-բուրմունքներ

գալարավարս (28)
 գաղտնադեմ
 գաղտնաթռիչք
 գաղտնավոր
 գաղտնատես
 գաղտնատեսություն
 գարունավորվել
 գեներաձիգ (17)
 գերպայծառամիտ
 գերպայծառացում
 գիտատուն
 գրադակոժ (6, 9)
 գունատրում
 գունատրություն
 գուսանավոր
 գուսանավորվել
 դալկադալուկ (90)
 դարսահեծ (78)
 դարձարանք
 դյուցազնատուն
 դշխոյասեր
 եռաքննում
 երազաերգ (75)
 երազամերիկ
 երգավոր (86)
 երգեղեն (12)
 երկնակարգ
 երկնասրահ
 երկնասկիյուռ
 երկնեղեն (11)
 երկնեղենություն
 երկրամութ
 երկունքվել (50)
 երկնափայլ (35)
 զիգզագավորում
 զորախմբերգ (62)
 զորանք (62)
 ընծայահպում
 թավախայծ (71, 95)
 թավաչք (54)
 թևակիր
 իմաստնափառ (46)
 լուսահանդես
 լուսնածոր
 խաղավոր
 խաչված-լքված/ին (57)
 խելառում
 խնկամոմիկ
 խնկատուն

խոլածիր
 խոլեղեն
 խոհադեմ
 խոհաչք (26)
 խոհավազան (42, 46)
 խորշակամիտ
 խորխտափայլ (41)
 խևոտվել// խևոտված (7)
 ծալիկ (29)
 ծաղկածիր
 ծանրեղեն (12)
 ծավիաչվի (41)
 ծովաթով
 ծովամիտ
 ծովատենչ
 ծորափայլ (32)
 ծոցվորեղեն (12)
 կամարակոպ
 կապտեղեն (12, 46)
 կապուտակարոտագույն/ը
 կարմրահեծ (61)
 կարմրածող
 կարմրավոր
 կարոտագիր
 կարոտատուն
 կենդանահաբ (65)
 հաղթատուն
 հաղթնորվել
 հայահնչում
 հայացքատես (60)
 հայեղեն
 հայրադեմ
 հանկարծատեսություն
 հասցեավոր
 հավերժադեմ
 հավերժահմա
 հացապաշտ (5)
 հեզնադեմ-սարկազմ
 հերածուփ
 հողմածեծվել/ած (64)
 հողմեղեն (12, 46)
 հորդախմբուն (51)
 հրահարս (հունի ծառը, 22)
 հրաշագնում
 հրաշախնդրվ
 հրաշասկիյուռ
 հուշ-հուշիկ/ներ
 հուրաչք
 հուր-հրայրք/ներ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

հուրյան
 հուրյան-հուրյան
 հուրուհորդեհ (88)
 մածնաթանձրուկ (43)
 մայրադեմ
 մայրամիտ
 մարդդեղվել/ած/եց (11, 82)
 մարմնախորհուրդ/ներ,
 մարտեղեն (12)
 մարտնորվել
 մեկնարանք
 մեղեդայնվել
 մեղկանյութ (95)
 մեղրածիր
 մեղքաթաթախ (3)
 մեղք-մեղավորություն (60)
 մոգե
 մոգեկիր
 մորմերկ
 մտախոկ
 մտախորշակ
 յոթնաերիզ
 յոթնահայեցում
 յոթնացողում/ի
 նախահիմն
 ննջավորել (8)
 նշխարանք
 նորահեն
 նրբահույս
 շաղ-շաղիկ/ներ
 շառաշրթունք (50, 56)
 շառաթերթված/ել (95)
 շառացուք
 շրթնածիր
 շուշանաշար
 ոգեռք
 ոգեղենական
 ոգեղենվել
 ոգետուն
 ողբանախշ
 ործակիր
 ործաստան
 չափակիր
 պեծկլտին
 պտղահանդես (59)
 ջրայնմբերգ (64)
 ջրածիր
 ջրամիտ
 ջրամոգ

ջրեղեն (իմ., 12)
 ռազմավորվել
 սերմնածաղիկ
 սերմնածիր
 սիրագուգս
 սիրակիզված/ել (65)
 սիրափթթում
 սոսիավոր
 սպասամուտ
 սրբածին (56)
 սուպրամենթալ
 վարդահենք (53)
 վարդեկանչ
 վարդեվարդ/եր
 վեհեղեն
 վերքավոր (86)
 վիրոտվել (վիրոտել ծևը կա
 չեզոք բայի նշմամբ, վ-ով ավելի
 հարմար կառույց է)
 վսեմակիր
 տատ-մամիկ/ներ
 տարածաչափում/ի
 տերունաբար
 տիեզերաբաշ
 տիեզերամիտ
 տիեզերաշուրթ
 տիեզերեղեն

տողարանք
ցանկամիտ
ցավածեի
ցքամիտ
ուսուցչատուն
փոթորկահարված (6)
քանդուկծիկ (13)
քառասլացք
քննամիտ
օձամարմին

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բալայան Զ., «Վիրակապ չհանդուրժող թևը», Ստեփանակերտ, 2003, 48 էջ :
2. Բալայան Զ., «Շառավիղեալն», Երևան, 1995, 100 էջ :
3. «Միտքը և գոյը», էջ 4, Բալայան Զ., «Վիրակապ չհանդուրժող թևը», Ստեփանակերտ, 2003, 48 էջ :
4. էջ 12, Բալայան Զ., «Շառավիղեալն», էջ 476-7, «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. I, Երևան, 1979, 1142 էջ:
5. «Շուշի» թերթ, Արցախ, N 06-07, մարտ, 2009, էջ 320, «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. I, Երևան, 1979 թ., 1142 էջ :
6. «Շառավիղեալն», էջ 32:
7. էջ 559, ՀՍՀ, հ. 7, Երևան, 1981, 720 էջ, էջ 7, «Ղիցաբանական բառարան» (թարգ. ռուս. II հր.), Երևան, 1985, էջ264:
8. էջ 74-75, Ս. Էլոյան, «Արդի հայերենի նորաբանությունների բառարան», Երևան, 2002 թ. 492էջ :
9. Զ. Բալայան, «Մեսրոպ Մաշտոց երևույթը և հայոց ազգային գաղափարաբանության բարդույթը» գրքի շապիկի III էջ, II հրտ., Ստեփանակերտ, 2008, 36 էջ:
10. Նորաբանությունները համեմատվել են հետևյալ բառարանների միավորների հետ՝ Ժամանակակից հայերենի բացատրական բառարան (4 հ.), ՀՍՍՀ ԳԱ հրտկչ., Երևան, 1969-1980 թ., 488-720-574-828 էջ, Աղայան Էդ., Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Հայաստան հրտկչ., Երևան, 1976 թ., 1614 էջ, Բարսեղյան Հ. Խ., Հայերեն ուղղագրական- ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Լույս հրտկչ., Երևան, 1973 թ., 980 էջ, Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Նաիրի հրտկչ., Երևան, 2002 թ., 492 էջ, Գալստյան Ա. Ս. (ղեկ.), Հոմսեփյան Գ. Կ., Սահակյան Ա. Գ., Սահինյան Լ. Ե., Նոր բառեր, Ա պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրտկչ., 2015 թ., 196 էջ, Գալստյան Ա. Ս. (ղեկ.), Գալստյան Ս. Ա., Հոմսեփյան Գ. Կ., Սահակյան Ա. Գ., Սահինյան Լ. Երևան, Նոր բառեր, Բ պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ Աստղիկ հրտկչ., 2016 թ., 184 էջ, Գյուրջինյան Դ., Հայերեն բառարան- տեղեկատու (միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր), Աստղիկ հրտկչ., Երևան, 2001, էջ 84 , Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան (II հրտկ.), Երևան, 2011, էջ 644, Словарь иностранных слов (16 и.), М., 1988, 624 стр.) :
11. «Գրական թերթ», Երևան, 2009, N 8, մարտի 22:
12. էջ 605, Աւետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1 (վերահրտկ.), Երևան, ԵՊՀ հրտկչ., 11142 էջ :

13. Աբրահամյան Ա. Ա., Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, էջ 640, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրտկչ., 1962 թ., 730 էջ, Աբրահամյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Օհանյան Հ. Ա.,
էջ 294-296, ժամանակակից հայոց լեզու (ձևաբանություն), հ. 2, ՀՍՍՀ ԳԱ հրտկչ., Երևան, 1974 թ., 588 էջ, Ասատրյան Մ. Երևան, էջ 220, ժամանակակից հայոց
լեզու (ձևաբանություն, II հրտկ.), ԵՊՀ հրտկչ., Երևան, 1989 թ., 432 էջ:
14. էջ 21, Խաչատրյան Լ. Մ., «Բառակազմական և ձևաբանական կադապարները ժամանակակից հայերենում», Երևան, Զանգակ-97 հրտկչ., 2011 թ., 272 էջ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նորակազմությունները Զինաիդա Բալայանի չափածոյում Սիլվա Մինասյան

Արցախյան ստեղծագործող Զինաիդա Բալայանի (ՈՒ ՅՈՆ ԻԿ) գեղագիտական աշխարհը չափածո ու արձակ է: Չափածոյում եղած նորակազմություններն երբեմն իրար մոտ նույնարմատ և հոմանիշ են կիրառվել: Հեղինակային նորակազմությունները, ըստ խոսքի մասային պատկանելության, հիմնականում գեղարվեստին յուրահատուկ ածականներ են (գոյականը քիչ է, իսկ բայը՝ սակավ): Հոգեկան ապրումներով դրսևորված հայրենասիրական նորակազմությունների մի մասը կոչականների շարք են կազմել: Նորակազմություններն ածանցավոր, բարդ, բարդ ածանցավոր կառույցներով են: Նորագույն փոխառություններով նորակազմություններ հազվագյուտ են: **146 նորակազմ բարդության բաղադրիչների** խոսքի մասային պատկանելությունում իշխում են գոյական+գոյական, գոյական+բայ կառույցները, իսկ շարահյուսական հարաբերություններում իշխում է ստորադասականը, որը հատուկ է հայերենին:

РЕЗЮМЕ

Новообразования в поэзии Зинаиды Баян Сильва Минасян

Ключевые слова: арцахское творчество, стих, авторская новизна, однокоренной, синоним, существительное, прилагательное, глагол, производная, сложносоставной, сложноподчиненное, заменяемый компонент, синтаксические отношения.

Эстетический мир арцахского творца Зинаиды Баян (**Մ ԵՆ ԻԿ**) – это поэма и проза. Новообразования в поэмах иногда представляются в форме стоящих рядом однокоренных слов и синонимов. Оригинальные новинки, с точки зрения принадлежности к частям речи, представляют собой в основном присущие для изобразительного искусства прилагательные (существительных немного, а глаголов мало). Некоторые из патриотических нововведений, образованных под влиянием психологических переживаний, составили ряд звательного падежа. По составу новообразования являются составными, сложными, сложносоставными. Новейшие заимствования редки. В **146 новообразованных компонентах по морфологической принадлежности** слова доминируют структуры существительное + существительное, существительное + глагол, а в синтаксических отношениях преобладает специфический для армянского языка сложноподчиненный.

SUMMARY

**New Formations in the Poetry of Zinaida Balayan
Silva Minasyan**

Keywords: Artsakh creativity, verse, originality, cognate, synonym, noun, adjective, verb, derivative, compound, complex, replaceable component, syntactic relations.

The aesthetic world of the Artsakh creator **Zinaida Balayan (U Yon Ik)** is a poem and prose. Neologisms in poems are sometimes presented in the form of adjacent root words and synonyms. Original novelties, from the point of view of belonging to parts of speech, are mainly adjectives inherent in the visual arts (there are few nouns, less verbs). Some of the patriotic innovations, formed under the influence of psychological experiences, made up a number of vocative cases. By the composition the neologisms are compound, complex, complex-compound. The latest borrowings are rare. In 146 newly formed components according to the morphological affiliation of the word, the noun + noun, noun + verb structures dominate, and the complex language-specific Armenian language prevails in syntactic relations.